

ԴՐՕՇԿԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇԵԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՊՕԼԻՍ—ԿՕՍԻՍԷՐ. ՀԱՃԻ ՏԻԳՐԱՆԻ

Ս Պ Ա Ն Ո Ւ Մ Ը

Սօֆիայից մեզ հետադրում են.—

Յունիսի 2-ին (ն. ա.) երեկոյան ժամը 8-ին Կ. Պոլսում դաշնակցական մի ահաբեկչի ձեռքով սպանեցաւ նշանաւոր պոլիս-կոմիսէր ՀԱՃԻ ՏԻԳՐԱՆԷ: Զարնողը ազատ և ապահով է: Ընդհանուր սարսափ կառավարչական շրջաններում և մեծ ուրախութիւն ու խանդավառութիւն ժողովրդի մէջ: Մանրամասնութիւնը նամակով:

Ս Ա Ս Ո Ւ Ն

Օ Գ Ո Ս Տ Ո Ս Ի 13

13-ն Յունիսի 1895 թ.

1894 թւականի Սասունի կոիւր, որ սկսեց իսկապէս յուլիս ամսի 23-ին և դադարեց օգոստոսի 24-ին Սասունի հսկայի Գրգոյի մահով, 30 տարւոյ մեր յեղափոխական շարժումներից ամենախաղաղը, հսկան է, իսկ նրա յեղափոխական և պատմական նշանակութիւնը շատ մեծ:

1894 թւականի Սասունի կոիւր իսկապէս առաջ է բերել մի այլ շրջան, նրանով սկսուում է մի այլ կեանք. նա բաժանեց հինգ հարիւր տարւոյ ստրկական կեանքը ներկայից և հայ ժողովրդին վերածնեց. յեղափոխական տեսակէտից նա վերածնող է, նա մի դարազրուէ է: Սխալ կը լինեն մեզ հասկացած, եթէ կը կարծեն, որ մենք սրանով հերքում ենք 30 տարւոյ յեղափոխական շարժումների նշանակութիւնը: Ոչ, մենք շատ լաւ պիտենք, որ վերոյիշեալ տարիների շարժումները պատրաստեցին մի յեղափոխական ժողովուրդ, կրթեցին մի ամբողջ սերունդ, որ բոլոր երևոյթների մէջ կայ մի

ընդհանուր կապ, շարայարութիւն, որ մի երևոյթ հետեւանք է նախընթացների: Բայց և պնդես, նա եղաւ այն յեղափոխական ոյժը, որ էլէքտրականացրեց ամբողջ հայ ժողովուրդը ու նրան յեղափոխական դարձրեց. նա էր, որ իւր հարւածով բարձրացրեց դարերով ստրկացած ամբողջ ժողովրդի ոգին և աւելի ուժեղ կերպով զգալ տուաւ, որ ինքը մարդ է և պարտաւոր է պաշտպանելու իւր մարդկային իրաւունքները ու պատիւը, նա էր, որ, բոլգարական սարսափներից յետոյ, մարդկութեան առջև հանեց սուլթանական լէշակեր կառավարութեան զաղբալի, գարշելի լեակատար պատկերը ու ազնիւ սրտերում զգւանք և զայրոյթ առաջ բերաւ, վաստակելով նրա՝ մարդկութեան համակրութիւնը, որ մի խրախուսանք, հոգեկան բաւականութիւն է կուէի դաշտում:

1894 թւականի Սասունի կոիւր բռնակալութեան մտայուտ անկումն աւետեց, իսկ բռնաբարւած ժողովրդին ապագայ խոստացաւ, նա Հայաստանի նոր կեանքի կարապետն է, նրանով հիմք է դնում նրա լաւ ապագային և սկսում է հակառակ հոսանք. բռնաբարւածի ու անպատւածի ջարդած, փշրած սրտում սկսում է բաբախել արև օրեր տեսնելու յոյսը, չքանում է վճատութիւնը և նա սիրտ է առնում, իսկ բռնակալի, բռնաբարողի սև սիրտը դող է ընկնում և սկսում են նրան կրեծ յուսահատութիւնը ու սև օրեր տեսնելու երկիրը: . .

Եւ իբրև այսպիսի մի նշանաւոր պատմական անցք, մենք պարտաւոր ենք յիշել այդ ու յիշեցնել եկող սերնդին, թէ կրթական-յեղափոխական, թէ պրօպագանդայի ու աշխատցիայի տեսակէտից և թէ, վերջապէս, իբրև ապագայ աւետող, իբրև յեղափոխական պատմական մի վերածնող անցք:

Իսկ 1894 թւականի Սասունի կոիւր մարմնացումը օ գ ո ս տ ո ս ի 13-ն է (ն. ա. 25-ը):

Սյդ օրն էր, որ ամբողջ Սասունը բոլոր կողմերից շրջապատւած էր թշնամուց և նրա տեղացող թնդանթների ու գնդակների հարւածների տակ հերո-

սարար կռիւ էր մղում. այդ օրն էր, որ Սասունը վերջնական հարած էր տալիս կազմակերպւած ու բոլոր միջոցներով զինւած թշնամուն, կռւի դաշտում նրան ի փախուստ մղում. այդ օրն էր, որ Սասունի բոլոր քաղերը՝ Տակալ Գրգոյից մինչև Նոպօս, միասին ու միաժամանակ մասնակցում էին կռւին. բայց այդ օրն էր և նրա յաջող կռւի վերջին օրը. Սասունի 94 թ. կռւի ամենից հտկուն, փառաւորը ու հնկան օգոստոսի 18-ն է կռիւ, որ անընդհատ անեց 27 ժամ. այդ օրը Գեղի-Գուգզանի և Անտօքի հերոսական ճակատամարտն է:

Ամենփառաւոր ժառանգութիւնը, որ մինչ թողնում ենք մեր սերնդին, այդ կռիւն է. հինգ դար է օտրուի, ճնշւած, կեղեքւած ենք, հինգ դար է շարուած, անպատւած, բռնաբարւած ենք. ի՛նչ էր թացեցել մեզ, ի՛նչ էինք մենք: Զեր թացեցել ոչ մի սրբութիւն, ոչ մի մարտիւթիւն, կորցրել էինք ամեն բան, լիբր, լիտի, գարշելի մարդկանց. քմահաճութեան և տրամադրութեան տակն էինք դրել՝ մեզ, մեր աշխատածքը, մեր դատիւը, մեր քոյրերը, մեր մայրերը, մեր կանայք ու երեխաները. ինչո՛ւ էինք ապրում... Մեզ ժառանգութիւն այս էին թողել մեր նախահայրերը և մենք ամենայն խոնարհութեամբ տանում էինք այդ անպատւարներ, այդ սողո ու գարշելի լուծը:

Բայց այսօր ծագում է նոր-օրայ, նոր-կեանքի յուսոյ արեգակը, լծէ և շատ թանգ գնով, անթիւ զոհերով գնած. մենք պարտաւոր ենք յիշել նրանց, որ իրենց արիւնով, իրենց նահատակութեամբ հիմք դրին նորանոր յոյսերի, մենք պարտաւոր ենք տանել այդ օրը, իբրև ազատութեան կարագետի տուն, իբրև յաղթական տուն:

Հոգ չէ, սուլթանական լիբր ու գարշելի կռաւախութիւնը թող մերօք իրեն առաջարկւած. ընթօրմեները, ընթօրմեներ, որոնք ոչարժեն այն թղթին, որի վրայ գրւած ենի, ինչպէս շատ ճիշտ կերպով նկատել է «Դէյլի նիս» թերթը. դա մի անխիղճ հեղուութիւն, մի անամօթ խաչ է, ի եթէ իբաւ այն է, ինչ որ լքագիրներն են յայտարարել:

Մենք շատ լաւ գիտէինք, որ այդ ընթօրմեների առաջարկութիւնը որ հակառակ-հարած է յետ մըղելու. հայ ժողովուրդը յեղափոխական շարժումից, որ դա մի մ ի ի յոց է յեղափոխական շարժման առաջնաունելու, որ կարող էր Արևելեան խնդիրը նորից բորբոքելու պատճառը գառնալ, բայց ոչ այս աստիճան էլ ողորմելի միջոցներով, և որոպական պետութիւնները իրենց այդ այնպէղ մանտօլով, խաղով, իրենց այդ վարժուեղով հակառակ հեռեանքի են հասնում. նոքա լծարձ փաստերով նորից համազում են բազմաշարքաւ

հայ ժողովուրդին, չթողնել յեղափոխութիւնը և յեղափոխականներին, լինել միշտ նրանց հետ ու նրանց բարեկամը. Իսկ յեղափոխականներս կարող ենք, շնորհակալ և երախտապարտ լինել պետութիւններին, որ լինելով մեզ թշնամիներ, պնտամիսայիւ օգնական են հանդիսանում յեղափոխականներին. մենք ինչպատեմք ի շարը չգործ գնել այդ ծառայութիւնը և օգուել նրանից:

Եւ հասկանալի է, որ այս որդիլի, յիրենց թղթին չարժող ընթօրմեները չեն, որ մեզ առիթ են տալիս առաջարկել հայ ժողովուրդին յիշել, տեսնել Սասունի 1894 թւականի կռիւը օգոստոսի 18-ին, իբրև ամենանշանաւոր. օրը բոլոր կռիւներից. հա՛ Այլ ընդհակառակը, մենք միաժամանակ արտայայտած կը լինենք և մեր բողոքը յայ հակամարդկային, այդ անխիղճ ու սովոր վարժուեղի դէմ Սասունի 1894 թւականի կռիւը մենք չենք նսնմայնել, նա մեր նոր-կեանքի կարագետն է, նա վերանծող է:

Ճիշտ երկու ամսից յետոյ լրանում է 1894 թւականի Սասունի հերոսական կռւի միամեակը.

Յօնի՛նք,
Յօնի՛նք օգոստոսի 18-ը իբրև յեղափոխական տուն,
Յօնի՛նք Գեղի-Անտօքի հերոսական ճակատամարտը:

ՄԱՅԻՍԻ 11-Ի ԺՈՂՈՎՐԴՈՅԻՆ ՅՈՅՈՒ

Յոյզերու և յոյսերու, խանդավառութեան օր մը եղաւ Համբարձման հինգշաբթին:

Առտու կանուխ, ամեն կողմէն, հետիտան, միով, շոգեկառքով, խառն բազմութիւն մը կը գրիւթր Ս. Փրկչի հիւանդանոցը, ուր յառաջագոյն հրատարակւած աղ-դարարութեան մը համեմատ, պատրիարքը համդիսաւոր պատարագ պիտի մատուցաներ:

Համբարձման տօնը կատարելու տենչը չէր միայն, որ այդ մօտ 20,000 հայերը կը քաշէր, կը բերէր հոն, այլ իրենց ներքին յուզմաներուն էլք մը տալու, իրենց արժանի պատրիարքին բերնէն մխիթարութեան խօսք մը լսելու, իրենց հայրենիքին բախտը վճռող աւետիք մը գողնալու անոր բերնէն. շատ այդ էր, որ կը մղէր սուտար ամբարը դէպի հիւանդանոցի դաշտ ու պարտեղը, որ աւելի քան չորս տարնն ի վեր ժողովուրդին անկեղծ ուրախութեան ձայն մը հնչած չէր:

Գետ առտուն իսկ ոգևորութիւնն այնքան ուժգին էր, որ ամբարին մաս մը ուղեց վար աննել և բլիկ բլիկ ընել օսանանաւ դրօշակը, որ կը ծածանէր հիւանդանոցին դրան վերև և հազիւ քանի մը յստերտերներու՝ ու յետհետեւերու՝ միջնորդութեան շնորհիւ այդ գիտաւորութիւնը գործ չգրւեցաւ:

Պատարագն սկսած է. փոքրիկ եկեղեցիին տարածութենէն տասնապատիկ աւելի բազմութիւն լեցած է դուրսը. ո՛վ է, որ կը ընէ պատարագը. դասնէն՝ ներ կը թնայտ յանհարժ առաջին շարքերէն, որոնք Տեաղ-Տեռէ մէծ մեծ ալիքներով կը կրկնեն բոլոր ետեւի շարքերուն մէջ, երբ պատրիարքը մայրամիջներ կ'ընէ մարդասիրական գազափարներով լեցուն իր քարոզէն վերջը:

Ժողովուրդը չի հասկնար անոր ըսածը, որովհետեւ, չի ներս բայց կ'ընթանի զգացումով, երևակայութեամբ: Պատարագի արարողութիւնը լիցցած է պատրիարքը շրջապատած եկեղեցականներով ու ժողովներու անդամներով, կը յառաջանայ դէպի հիւանդանոց: Ծափեր ու կ'իցցէներով կորոտան, համայնքներ կը թռչեն պատրիարքի ձեռքերուն, կուրծքին, զրանցքին Թան պատրաստից թափոր մը կը. կազմի, որ կառաջնորդէ պատրիարքին յաղթական գնացքի մը պէս. ոգևորութեան ծայրագոյն ստիճանը կը հասնի, երբ յանհարժ արեւորին մէջ հոսժիւռ ձեռքեր կարօր խառով ձեքմակ դրօշակներ կը ծածանեն. հազարաւոր բերաններ, հազարաւոր ձեռքեր մուշկին կ'իցցէներով ու ծափերով զաշար կը թնչացնեն: Զգացումները, որ շատունց ի վեր կաշկանդած էին, ազատ թռիչք մը ստացան և անհուն ոգևորութեամբ, սրտի խորքերէն, վիշտերու մէջ կրտայանած ձայներ կը հնչեցնեն ազգային նշանաւոր երգերէ: Խուսիք մը աստին «Պայր Աբաբան»՝ կերպեր խանդավառ և սխուր, հոս ուրիշներ՝ երիտասարդ, կատաղի հնչեմներով «Պայրը Տնչեց Երզրուսի լեռներէն» կորոտացնեն. մինչ անդին ծեր պնդութեանն որ «Իծեռնակ» կը փորձեն իրենց խուսուտ ձայներով: Այդ ընդհանուր խանդավառութիւնը մոլեգնութեան փոխեցաւ, երբ յաղթանգամ մշեցիներ «Կերիք որդեակ» սկսան:

Այդ միջոցին պատրիարքը, որ մտած էր յիմարանոցը այցելելու, դուրս կ'ենէ և դէպի որբերու վարժարանը կուղչէր իր քայլերը: Պատրիարքը նորէն սենեկելով, ամբողջ «կիցցէ Իգմիրիան» աղաղկեց, բայց շուտով «կիցցէ Հայաստան»՝ խեղդեց բոլոր գոռոշները: Այլ վախ չմնաց. այդ միակ բաւը եղեքարայոց փողովուրդը, թաշկնիակ, գաւազան, գլխարկ կը տատանին օդին մէջ. ֆէսը գետնէ գետնի կը պատուարի, գաւազաններու ծայրը մշեցիի նաշտուն արեւելին կը բարձրանայ: Իրօշակները արդէն կը սփռին ծածանիլ և ձապապարաստից ձառախօսներ կը արձարանան ուսերու, աթոռներու վրայ, որոնք Սասունը կը սիշեցնեն և «կեցցէ Յեղափոխութիւն», «կիցցեն գաշնապահանները», «կիցցեն հնչանգամները»՝ դասկնէ սուլթանն Համիդը՝ կը պոռան: Վարդապետ մը այդ միջոցին փորձեց համոզելու ամբողջ, որ քիչ մը խոհեմ գտնելն և իրենց զգացմունքն չափաւորեն, երիտասարդները ձեռքերնուն վրան բարձրացնին խեղճ մարդը և «կեցցէ Հայաստանով»՝ զոցեցին անոր բերանը, թող չտա՛ցէ, որ իր խօսքը շարունակէ: հպարտութեան ինչն ալ ընկնեցաւ և համոզելու սեղ, համոզած ետ գարձաւ:

Երբ ժամ մը ետքը պատրիարքը վարժարանէն ետ

կը դառնար ճաշարան մտնելու, երկու մշեցի կ'ենէր դուռն առջև կեցած «Նախիբ ընկեր»՝ նապեցին արևոյի վրայ Յուզումներէն յոգնած, պատրիարքը քաշեցաւ քիչ մը հանգստանալու ժողովուրդը այլ ևս գործ չունէր հիւանդանոցին մէջ. դառալք, պարտեզ՝ աղաղակը ամենքն ալ հաստատութեան դիմադրի պարտեզը մզեց: Ամբողջ հոն խուսած միջոցին, դրան մօտ հանդիպեցաւ բանտէն նոր ազատող ալեկարդ քահանայի մը, որ իր կերպեր ձայնը կը փայտեր աւնոց կ'իցցէներուն: Ժողովուրդը յուսած, ծերուկը շրջապատեցին և սկսան համայնքին տեղի վրայ անոր թողման պտերուն, մերուքին և ձեռներուն. Գիչ մը ետքը նորընծայ մը եկաւ պատրիարքի կողմէն յորդորելու որ քիչ մը չափաւորեն իրենց խանդը և ցոյցերը՝ նորընծան պարտեզին մէջ, արհիւրքով կ'սկսեցաւ, սպասելով որ լուսութիւնը հաստատուի. վերջապէս քիչ մը ճանդարտեցան և տեր հայրը սկսաւ խօսել, բայց ինչ... Արագանի կողմէն յայտնեց որ շատ ուրախ է անսնելով հայերը այդպէս սիրով, բայց կը փափագի, որ այդ սերը ոչ թէ ժամանակաւոր, այլ յաւիտենական ըլլայ և հաստատուն: Ծափերն ու կ'իցցէները կը միջակեակն տեր հօր խօսքերը:

Թափորներ վերստին սկսած կ'աղմուկէ, ծեր, սղայ, երիտասարդ, ծառի ոտներ ձեռքերին, դրօշակներով արդէն սկսան իրենց երգեցիկ գնացքները պարտեզին շուրջ, մինչ ներսը հիւանդանոցին մէջ, ուր կը ճաշեր պատրիարքը, բազմաթիւ հրաւիրեալներու հետ, կենացներ կառաջարկէին և ասնաբանութիւններ ու ձառնք կը խօսէին, ո՛չ անմասն դուրսը սիրող խանդավառութիւնէն:

Երեկոյեան դէմ, պատրիարքին մեկնելէն ետքը, ցոյցերը ոչ միայն շնչապեցան, այլ աւելի ևս սաստիկացան: Ստիկանութիւնը փորձեց երիտասարդ մը ձեռքակաշկելու, բայց ամբողջ խեց անոր ձեռքէն. հետեանցն այն եղաւ, որ խոհեմութիւն համարեցին ընտել շարժաններու ընդհանրութիւն լրտեսներու անուններ. հետեանալ օրն իսկ 80 հոգիի ըստ ձեռքակաշկեցան և սոսկաւին ձեռքակաշկութիւնները կը շարունակին և շատերը կը փնդուին:

Այդ օրը թե՛ն, ինչպէս ըսինք, ստիկանութիւնը խոհեմութեամբ շարժանեց, վախճալով հախառակ պարագային մեծ կոտորակի մը հանդիսալիցային անկ Փրկչի պարտեզը, բայց ամենայն աջալսութեամբ Տնտեսք և նշանակեց ցոյցի առաջնորդները, որոնց թիւը, կըսուի, 800-էն աւելի է:

Ծպտեալ ստիկաններու և լրտեսներու թիւը նոյնպէս հարեւրներու կը հասնէր. ստիկանութեան նախարար նազմ փաշան եւ ծպտեալ հոն՝ կու: Բազմաթիւ հեծեալ ստիկաններ ևս պարտեզի շուրջը բլուրներու վրայ անխարթ աւելեցով կը հսկէին:

Եթէ այդ ցոյցի հետ ժողովուրդը միացնէ և գործը, բզկի բզկի անէր ստիկանները, կոտորի հարեւրաւոր լրտեսները, սպանէր նոյն իսկ ծպտեալ արիւնաբլուր նազմ փաշան, աւելի դժգոյս պիտի ըլլային: Այժմ գործելու ժամանակն է, գործով արիւնով ցոյց անելու է և

ոչ թէ վերականգնու է մեր վաղամեծի տերայիշատակ սահմանադրական-նպուռի ցոյցերը...

ԱՊՐԻԼ 3-ի ՅՈՅՅԸ ԲԵՐԱՅԻ ԳԵՐԵՉՄԱՆՈՅԻՆ ՄԷՋ

Պօլսի մէջ մեծ ժողովրդականութիւն կը վայելին մեռելոցի սուները. ժողովուրդը գունդագունդ կը դիմէ արուարձաններուն մէջ գտնուած ծանօթ գերեզմանոցները, ուր ամբողջ սերունդներ կը հանգչին անգիտով, և որոնք կը ներկայանան իբր յուշարարներ պատմական անձերու և անցքերու:

Այդ օրը, ապրիլի 3-ին, Զատիկի մեռելոցին երգուշարթի, խուռն բարձրութիւն մը գրաւած էր Բերայի հայոց հռչակաւոր գերեզմանոցը. — հռչակաւոր այն կարգ մը ծանօթ խնդիրներու շնորհիւ, որ ծագեցան ժամանակի Ազգային Վարչութեան ու կառավարութեան միջև, — որուն մասուն մէջ տերանուն եպիսկոպոս մը, Բարթիմէոս Պարայի վանտան առաջնորդը, անդ պատարագելու հրահրած էր: Պատարագի աւարտումն ետքը, հին սովորութեան մը համաձայն, հոգեհանգստի պաշտօն մը պիտի կատարէր գերեզմանոցին շրջափակին մէջ անփոքած նահատակի մը շիրմին վրան: Եր ունայնատուութեանը ալ ծագելի ու զգւելի եղած եպիսկոպոսը ոստիկաններ կը հրահրէր կարգ պահպանելու թափօրի առաջնապալու ստան: Ժողովուրդը, արդէ յուզած գերեզմանոցին յարուցած պատմական յիշատակներով, կը վրդովի եպիսկոպոսին այդ անպատահութիւնն և խորապէս վշտացած այդ վերատարանքէն, կսկսի աղաղակել թէ իրենք թուրքերէն պէտք չունին գաս աւանելու հայ արարողութեան մը պատշաճ յարգանք ընծայելու համար և խօսքը զործի փոխելով կը հրին, կը հրշոյսն ոստիկաններն ու զինուորները և բռնի կը հետանցնին:

Արարողութիւնը հազիւ վերջացած՝ ժողովուրդը կը սկսի իր ուրբանութեան և սովորական զարճութեան անձնատար ըլլալ: Ամեն կողմէն կը լսուին հրազեններու պայթիւն, ուխտագնացութիւններու ստան աւանդական անհրաժեշտ եղած բան մը, սովորութիւն, որ յոյնին ալ կը պահեն սիրով: Սակայն ոստիկանները, որոնք ամեն պայթիւն յեղափոխական շարժման մը բռնկելը կը կարծեն, ա՛հ ու սարսափի մէջ կիսին: Հրազեններու երեւումը հայ ձեռքերու մէջ զայրոյթ կը պատճառէ, մասնաւոր իրար կանցնին, երբ դաշնակցական քաջարի երիտասարդի մը ձեռքին մէջ կը նշմարին ընտիր ուժով զլցւած մը: Յեղափոխական մէ ձեռքակալելու, բռնելու յայտնով ոստիկանները միահամուռ կը խուժեն երիտասարդին վրան, բայց հաշիւը սխալ եղած էր. ժողովուրդը ի նկատի առած չէին, այն ուժը, որ օրէ օր սպառնալից դիպ մը կատարայ իր կեղեքելներուն հանդէպ: Պատարագութեան, զայրոյթի աղաղակ մըն է, որ կը բրդի ամեն կողմէն — «Ո՛վ իրաւունք աւու ձեզ գալու, քիթը ինքի խոթելու մեր գարձութիւններուն մէջ կը դուռայ խլացնող ձայն մը ամբուխին միջէն, մերք մը մը

օրանց ձեր պայրաճներուն խառնած, արգելք եղած ենք: — Ո՛ր ինչ լրտութիւն է, կը պոռար հուժկու կոկորդ մը, ինչու յոյներն իրաւունք ունին զէնք արձակելու և մերք մը, հէ՛, ինչու:» Եւ արդոյ մըն է կրկնի Թուրքի կայր, ազէս մոլեռանդութեան, ոստիկանների զարեղի լրտութեան դէ՛ս կուտակած գարշազնն և մազը կը պոթիկայ սրտերէն ժողովուրդին աչքին ալ բան մը չերեւար, ամենքն ալ միահամուռ կ'իյնան ոստիկաններու ու զինուորներուն վրան, ոչ միայն աղտուելու երիտասարդն, որ քաջաբար կընդդիմանար, այլ և գաս մը տալու այդ կողմի պաշտօնեաներուն:

Ամբոխի կատաղութեան առջև շուտով ընկրկեցան ոստիկանները ու զինուորները. իրենցմէ մէկը այդ միջոցին կը փորձէ դուրս ելլալ գերեզմանատանէն, մերձակայ զօրանոցէն օգնութիւն պահանջելու համար, յարց մընքի մը, դաշնակցական, կը հասնի ետքէն ու կուտփի մէկ հարուածով գետին կը փռէ զինուորը:

Մինչ աստիկ՝ գերեզմանոցին մէջ՝ զործն այդ կերպարանքը կը ստանար, անդիս Բերայի զօրանոցներուն մէջ, ուր ընդհարման լուրջ հասած էր արդէն, մեծածն պատրաստութիւններ կը տեսնին, խիղջն խեղդելու համար այդ նոր ապաստանութիւնը: Վէս ժամ շանցած, 500 զինուորներ վազէ վազ կը հասնին և կը պաշարին գերեզմանոցը չորս կողմէն, միջև սերէ մաս մը ներս կը մտնէ խողովութիւնը զապելու համար սիւններով: Բայց ալ ուշ էր. սիւններուն տեսքը և զօրքի շատութիւնը ժողովուրդը չը վախցնելու գաս, աւելի ևս կը կատաղեցնէ ձափառ ձափախ, կուռն կրկնի, մեծածն համաձայնութիւններ անէլ սպառնալով ժողովուրդը կը դիմադրէ ամեն կարելի միջոցներով: Միջ ումանք քարերով կը յարձակին զօրքին վրան, աւելի յանդիմանք զինուորներու ձեռքէն սիւններ կը խլին և անոնցմով կը վերաւորին: . .

Վառուչներու աղաղակը, աղաղակներուն ու կիններուն վայնասունը, զինուորներուն գալուստը փանկի մը կը ձգէ վերին Բերայի մէջ: Ո՛վ դիմէ զործն ինչ աղետալի կերպարանք կրնար ստանալ եթէ այդ միջոցին շանցէր գերեզմանոցին մտնէ ուսուական դեպքանք, որ թուրքերուն այդ յիմարտութիւնն ալ գարմանելու կը փութայ, խիղջն յայտնել տալով պէտք եղած շրջանակներուն, որ զգուշանան նոր Սասուն մըն այ Պօլսի մէջ առաջ բերելէն: Բարձրագոյն եկած հրամանի մը համաձայն, յոյներն զինուորները ետ կը կանչեն, գերեզմանոցը կը բացուի և ժողովուրդին թոյլ կը արեւ ցրելու:

Այս դէպքը շատ մեծ սպաւորութիւն առաջ բերու հասարակութեան վրայ, կառավարութիւնը աչք վախցնելու համար քանի մը ձեռքակալութիւններ կատարեց հետեւեալ օրը, բայց նոյն օրն էր, որ մարդ մը յարթութեան կերպով կը մտնէր Բերայի հայոց թաղ: Խոր հրդարանը և սին մը յանձնելով՝ ատենապետին, կը խնդրէր, որ պաշտօնապէս իր սիրովէ վերադարձնէ, որովհետեւ, կրէս հիւսպ ալ պէտք չունիմ, իսկ պէտք եղած ասուն նորէն կրնամ ձեռք անցնել: . .

Սուլթանն այնքան չարացած էր այս անցքէն, որ

հրամայեց հետևեալ օրն իսկ արձակել իր պաշտօնի մէջ պաշտօնավարող հայերը (սպասաւոր, խոհարար և այլն):

Ասպիտով նշանաւոր օր կը ձայն ապրիլի 3-ը, ժողովօգային կիսակցութեան ինքնարարքեր արտայայտութեան հետջեակ յանձնար իրկուող գեպքերն մէկը, միահամուռ ազգային յեղափոխութեան պարտաւորութիւնը պիտի ըլլան մտօրիկ ապագային մէջ:



ՏՐԱՊԻՋՈՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՄԱՆԸ

Մայիս 15-ին Յրապիղոնի առաջնորդ ս. Եղիշէ ծ. վարդապետ Ավագեան երկու բազմերանիներ կորելով, անձնապահութիւն փորձեց, բայց չարողեցան Յաջորդ օրը, մայիս 16-ին երեկոցեան մտ, հիւանդապահները խարելով, ամփոշապետ ինքզինքը առաջնորդարանի վերի սրահի գտնուհանէն փողոց նետեց և մուռա Պատրիարքի բացառիկ թղլուութեամբ թաղուող հանգիստով կատարեցաւ մայիս 18-ին:

Առաջնորդը Սասնոյ կտորածէն և Եւրոպայի համակրական ցոյցերէն ի վեր բոլորովին փոխած էր իր քաղաքականութիւնը և մանաւանդ վերջի ամիսներու մէջ, յունւար 30-էն սկսեալ իր քարոզները մեծ մասամբ յեղափոխական էին: Կառավարութիւնը տեսնելով այս կատարելութենէն ինչ ընելիքը չէր գիտեր: Սակայն առաջնորդի մտաւ 25-ի, Երզնկապարտի օրայ տւած քարոզը պնջտի կը իրփոխեն կառավարութիւնը, որ խոզափա կուսակալը ամեն օր հեռագրի հեռագրի վրայ Բ. Դուռը կը քաշէ, փաստելու համար թէ «առաջնորդը ամենաուղիկ խողովարար մ'է և բացէ ի բաց հետաւորներ ժողովուրդը յեղափոխութեան կը գրգռէ ան»: Բ. Դուռն ալ ձեռքը սողը գող ելած, խիստ ծանուցագրի մը կը զրկէ պատրիարքին՝ պահանջելով առաջնորդի պաշտօնանկութիւնը: Պատրիարքն ալ պաշտօնազրկով մը արքիի մէջ բացառութիւն կուզէ առաջնորդին անցած գործածին վրայով: այդ պաշտօնազրկի պարունակութիւնը ստեղծով կապէ առաջնորդին: Սակայն վալիին հետ յարաբերութիւններն ալ աւելի թշնամական գոյն մը կուտեն: Վալի ըսած այգ նենգափառ գաղանք Քոջ գիւղի գլորող քանդել կուտայ, կառավարական փաստ ժողովներու անդամակցութեան համար ամենագծուծ խնդիրներ կը հանէ, լուսաւորականներու և կաթողիկոսներու միջև թշնամութիւն կը սրբուէ, հայ բանարհութեանց թիւը կը շատուցանէ, հայ յիւրուն փնտեսելու և մասնաւորապէս առաջնորդին թըշնամական, անպատեղաւ դիտումով:

Առաջնորդը կառավարական հալածանքէն յուսահատած, մագրոցի Պոլիս երթալ մայիս 13-ին. սակայն պէտս ամբոյն մը թեղարարով յիմարէ մը կարծեց թէ առաջնորդին մեկնուող ներքին թշնամութեան արդիւնք է և խուճեց առաջնորդարան, բայց փոխանակ թէ ու թիկունք ըլլալով առաջնորդին պաշտպանելու զայն կառավարութեան գէմ, սխաւ յիմարական ցոյցերով

առաջնորդին ուժը զլատել և չհասկանալ առաջնորդին քաղաքական կացութիւնը ու արքելք եղաւ միանելուն: Այն օր կառավարական պաշտօնեաներ առաջնորդարան գալով, պաշտօնապէս բացատրութիւն ուզեցին ամբողջ գրգռման և իր երթալու պատճառներու մասին: Առաջնորդը խորապէս յուզեալ յայտարարեց.

«Ես կերթամ բոլորովին կուսակալէն ու կառավարութենէն հալածուած. այդ ինչ լրբութիւն է ու խայտառակութիւն կառավարութեան վարժուողը. պարբերաբար տանեանիներով ամենը հայ դիւղացիներ ամիսներով կը բանտարկէ լոկ կաշառքի և միփայն կաշառքի համար. դատարաններու մէջ արգարութիւն չկայ. օրինակի համար՝ Աջաւորեան եղաւոց նման պատուաւոր վաճառականներ սարքով բանտը կը փնէցնէք, զանոնք կողպանել տալով թուրքերու. ամեն բան կամայականութեան դատապարտած է. դպրոցներ կը քանդուին առանց օրէնքի. կուսակալը օրէ օր խոչընդոտներ կը հանէ ինչ գէմ, որպէսզի զիս ամլութեան դատապարտելով չչրնուծ ապրել հոս. շարունակ ինչ նկատմամբ կը գրէ ու կը գրէ, եթէ հայի ոչնչացման կաշնատի, նախ թող զիս վերջացնէ. գացեք ըսեք կուսակալին, ես իր հալածանքէն կը թողում թեմը, ինչ որ պիտի ընէ, թող ընէ»:

Կառավարութիւնը արեան յուզման ձայն առնելուն պէս պնջտի սարսափեցաւ և ինքզինքը կորուս, որ անմիջապէս 100-150 զինուոր զինած պահականոցն Մէլտանի կողմը զրկեց, բայց վախելով, որ մի գուցէ հրահանքի զնդակները պակաս գան, բռնակիրքով ալ զընդակ հասցուց զինուորներուն. կատարեալ պատերազմի: պատրաստութիւն մի բուռն հայ անգէն ամբոյն գէմ: Ինչ քարտիւնէն, ինչ անզուգական աշարջութիւն: Բայց կերելի թէ հասցաւ իւր ծիծաղելի դիրքը և չմիջամտեց այն օրայ ցոյցին:

Առաջնորդը վերին աստիճանի յուզած և իր առած քայլէն սարսափած, երկու օր վերջը անձնապահ եղաւ թէև, սակայն նա զո՛ճ գնաց կուսակալի բունաւորութեան Տ. Եղիշէ զո՛ճ մ'է կառավարութեան գաղանկութեան և իր վերջին վարժուողն նախատիք մը Տրապիզոնի հայ հասարակութեան:

Նորա մահան բուն պատճառը կուսակալն ու կառավարութիւնն է: Թողուք իւր ոչ փորձան անցեալը, թողուք իւր թուլարտութիւնը և իւր տխուր անձնապահութիւնը, որ իւր հոգեկան ուժի չզգլութիւնը կը յայտնէ. թող որ նա Զեքիի և Քահսիի սիմններու գիմաց չէր ազուէր և իւր միջոցներով շատ լաւ կորող էր ազգէն շահը պաշտպանել ողջամբ և ոչ թէ անձնապահութեամբ: Բայց ինչ որ ըլլայ, ժողովուրդ, նրա մահը յեղափոխական է, նրա մահը արգիւնք է Թիւրքեայի մէջ տիրող դժոխային ընտրիմ և նա ողջ զո՛ճ մ'է կուսակալի գաղանկութեան:

Ժողովուրդ, նա քեզ այս պարզ և դու չէ հակցար. զու հայուկան երկուսը թշնամին, սուլթանի կառավարութիւնն, հոն կանգնած և ծաղործու և գաղանկային հրճանքով, ուրախ՝ քու առաջնորդի մահան համար, զո՛ճ իր խմած արեւուն, ձեռքերը չփող:

քու գրած ծանր նախատիքիդ համար Յրապիզանի հայ, եթէ գու խելք ունիս, մի ասիր քեզ, մի կրկուսր քեզ դեմ, մի՛ խնձերեք ժամընորդ-ւոր:

Եթէ քու ցաւդ անկեղծ է, լուծե՛ք վրեժդ մարդա-կեր կառավարութիւնէն:

Եթէ գու իրաւունքիդ գիտակցութիւն ունիս, ուղղէ հարածդ լեշակեր պազան կառավարութեան՝

Քանի գոյութիւն ունենայ նա, քու դժբաղդութիւնդ ու թշուառութիւնդ անպակաս պիտի ըլլայ, քու նախ տիրե՞ր ճակատիդ վրայ դրօշմած պիտի մնայ:

Նախատիր կայ քու ճակտիդ վրայ, միայն է միմիայն արդար վրեժառութիւնդ պիտի օրբէ զայն:

ՆԱՄԱԿ ԿԱՐԻՆԵՑ

Գարունը բացւեց և աւազակ թիւրքերի և զինուորնե-րի համար դարձեալ բացւեցին աւաղարութեան և մար-դապատնութեան օրերը: Ա. Յարութեան գեղերը կողոպ-տել է Հետակ գիւղի կէտեղեցին. այդ գիւղը գտնուում է Կարինից 8 ժամ հեռու: Կողոպտողները եղել են սաճիկները. հետքը գտնւել է մի սաճիկ գիւղում: Յեղոյս առաջնորդը բողոքեց վայելին, բայց աւազակնե-րը զեռ չեն ձերբակալւել: Կողոպտուեց Հերթի գիւ-ղի ղեկի սոււնը, որի քիսը հասնում է մտաուարպպես 200 սպիկ:

Կարինից կես ժամ հեռաւորութեան վրայ գտնուող կէս հայ կէս սաճիկան գիւղում մտա օրեքս վից զափթիկայ հարկահաւաքներ մտնում են հարկ հաւա-քելու: Երկու եղբայրներ կապւում են սինի վերայ, չարաչար ծեծւում և այժմ մերձ թ մահ պառկած են անկողնի մէջ:

Այս բանի համար գիւղացիք գինեցին առաջնորդին. նա էլ բողոքեց վայելին, բայց իզուր. չարագործները մնացին առանց պատժի:

Ժողովուրդը խիստ նեղ վիճակի մէջ է. չեն կարո-ղանում հարկերը վճարել. իսկ հարկահաւաքները հար-կի փոխարեն խլում են հայ գիւղացոց այն, ինչ որ աչ-քի է հանդիպում՝ եղ, կով, ոչխար, կանանց զարդեր, նոյն իսկ բերքերն քաղար և ծախեցին պարկեր ան-կողիններ: Ի՞նչ քանիներով հաքիք հանել են չմուշած զգեստներ... Ժողովուրդը անելանելի գրութեան մէջ է, օր աւուր սպասում են ազատութեան ձայնը լսելու: Այդ յայտն է, որ նոքա զեռ համբերում են այս բըռ-նովիկներին...:

Ամսոյս 15-ին Բիւրիքից կարմունջի վրայ բռնւում են երկու հայ կարնեցի երիտասարդ, որոնք Բասենից գալիս էին քաղաք: Սոցա բռնում են օւթը սպառա-զէն համբոյժի զինուորներ նախ փրակարում են՝ նշան համայնի որդուն. սպա միւսն վերաւորելոց յետոյ աւազակները թանկելով սրանց տանում են կարմունջի մտ գտնուող լեքան միւս կողմը, որտեղից մօտիկ է Բիւ-րիքից հայ գիւղը: Այնտեղ սաստիկ տանջում են

հայերին, մերկացնում են և սկսում են ստել. ոչ հայ-հայեցիք ձեր Յիսուսին, եթէ չեք հայհայի կարպանեք ձեզ: Կայերը չեն հայհոյում. երեք ժամ քաղաքի-լուց յետոյ վրայ են հասնում գիւղեց հայերը՝ լսելով իրենց նախընտց եղելութիւնը: Երբ գիւղացիք մտե-նում են, աւազակները թողնում են և հեռանում: Գիւ-ղացիք վերաւորներին գիւղ են տանում և ինսմում են նոցա վերջերս: Այսօր նրանք եկան քաղաք յայտնե-ցին սեղոյս դատարանին իրանց վիճակը: Աստիկանա-պետը բարկանում է և դուրս է վճնդում հայերին Բա-ղաքիս մէջ նոյնպէս անպակաս են աւազակութիւնները: Օր ցերեկով զինուորները կողոպտեցին մի հայի և մի սաճիկ մաքսատան պաշտօնիայի Ցաճիկ գիւղացիք նոյն-պէս շատ նեղութիւն են ապիս հայ գրացիներին: Մտա օրերս Սոխըրմուկ գիւղից մի քանի հայեր գալիս էին քաղաք: Ճանապարհին մի քանի սաճիկներ ստիպում են նրանց, որ պետք է իրանց շալիկն և տանին քա-ղաք: Հայերը վախենալով թուրքերից, առնում են նոցա իրանց շալակը և բերում մինչև քաղաքիս շրջապատը:

Վանից բերին կապանօք և տարան Պօլիս Իսմիէլ վարդապետ Կուսանանին և երեք քահանաների Մու-րատին և Խարախանեան վարդապետին այս օրերս պի-տի բերին Մուշ Եանձնատղղլին ներկայանալու համար:

ՆԱՄԱԿ ԳՐՈՒՍԱՅԵՑ

Ապահովելու համար թէ թուրք կառավարութիւնը որպիսի վայրենի ընթացք բռնած է հայութեան դեմ և թէ ինչ բարբարիկ միջոցներով՝ կեղեքեալներով աշ-խատան է ու կաշխատի բարոյապէս ու նիւթապէս ու-նջացնել հայ տարրն, բաւական է լոկ ուշագիր ակ-նարկ մը նետել հոն, ուր հայեր հաստատած են, հոն, ուր անոնց իրենց աշխատասեր ոգւով և զարգացման ու քաղաքակրթութեան ընդունակ խառնաձեռով յա-նդած են տիրող տարրեն աւելի վեր բարձրանալու:

Հայերը բազմութիւն են կուսակալութեանս մէջ, մա-նաւանց Կեղեկի և Բաղար գաւառակներու մէջ, ինչ-պէս նաև Ինչիմիտի շրջականերն: Մեծամեծ աւաններ լի են հայ ազգաբնակչութիւնով, ինչպէս Պարտիզակ, Ատարգաթ, Մեծ-Նոր-Գիւղ, Մեօջու, Զենիկիք, Օվա-ձըզ, Միջագիւղ, Բաքցի, Պեչլի, Բէրեմէն և այլն... Թաւական հանգիստ և գիւրակեաց վիճակ մը ունէր այդ տեղերու հայ ժողովուրդն, բայց վերջին Ռուս-Պրքական պատերազմէն վերջը, վերջացաւ հայուն հաս-նութեան վիճակը. այլ ևս ապահովութեան մէջ չէին: ոչ անոր կեանքը, ոչ պատիւը և ոչ ալ գոյքը: Պարուած թուրքը, գեաւուրներէն իր վրեժը լուծելու համար սկսաւ իր ձեռքին տակ գտնած խելջրի հայը չարչոյժել: Աւերիչ մարտի խուճարում պէտ, եկան թափեցան այլ կողմերը չէրեզներ, գիւրջներն լաղիս և այլն, գրա-ւեցին սարերն ու ձորերը. այդ լեռնցի բարբարոսները ապրելու ոչինչ չունէին և ոչ իսկ աշխատելու կամ: ուստի սկսան կողոպտել հայուն ձին, ոչխարն, կովը,

գրամբ, ի հարկին պահելով ալ. արպ կանոնաւոր աւազակախմբեր կազմցին և պարբերաբար լեռը Հանեցին Տայ հարուստ գիւղայինները:

Ամեն բողոքը, ամեն զանգատ, ամեն դիմում՝ անօգուտ եղան. կառավարութիւնը և ոչ մի պիտի կանխ խորհեցաւ ապահովելու Տայուն կենսքն ու գոյքը. իրաւ, երբեմն զրկեցան զինւորներու և օստիկաններու խումբեր, բայց ասոնք աւելի գէշ պատիժ մը եղան Տայ գիւղացիի գլխուն, վասնզի ասոնք փոխանակ երթալու լեռներն ու նստառներն աւազակներն հաշածելու սկսան կարգաւ պատել կարգաւ. Տայ գիւղերն կեղեքել, ժողովուրդը իրենց անօրինակ պահանջումներով՝ զօրանցներու մէջ անօթութենէ նիհարցած մարմինն կարարտացնելու համար:

Թողունք մնիք անցեալը, թողունք Տին զոհերը, դառնանք մնիք ներկային:

Անցեալ տարի՝ օգոստոսի մէջ Բերեմէթ գիւղի չորպաճի նիկողոս աղան խուսը մը տաճիկ աւազակներու ձեռքով լեռը տարւեցաւ գիւղին միջէն խեղճ նիկողոսը իր կենսքը փրկելու համար ստիպեցաւ իր ունեցածը չունեցածը փախելու և աւազակները գոհացնելու, կառավարութիւնը և ոչ մէկ պտտիկ փորձ չըրաւ. ձերբակալելու աւազակները, որուն վրայ Բերեմէթի աշաներն յուսահատած ամբնեցրով Պոլիս թափաղակեցան:

Դրանեալ անցեալ տարի նոյեմբեր 3-ի գիշերը Մեծ-Նոր-Գիւղի Պէլէտիցէ՛՛՛ հալուչ Ստեփան Մակարեան, երբ գիշեր ատեն իր տունը պտտեց և կը գտնուի, կուգան իմաց կուսան, որ զպարթեան քեջ կուզէ. Ստեփան իր պաշտօնին բերումք կանապարէ երթալ, բայց կը տեսնէ, որ ոչքը կանչած է զնիքը. ուստի ինքն ալ՝ կասկածեցով, որ դաւ մը չըլլայ իրեն դէմ, Տեւոթ Տայ գիշերապաճ մը առած և կը գտնայ տուն. Ճանրանք քիւրդ Մուսա անուն Տին շարպարժ մը՝ իր դէմը ելնելով, հրացանին բունովը պնդպիս ուժգին հարած մը կուտայ գլխին, որ խեղճ երկասարքը անշունչ կիւնայ գետին՝ անօգնական թողով ծեղունի մայր մը, կին մը և քանի մը մանրիկ զուգակներ:

Կառավարութիւնը կը ձերբակալէ քիւրդ Մուսան և Տայ գիշերապաճը. վիաներով կը հաստատուի Մուսային միջապարտ ըլլալը, քանի որ քանի մը որ ստաջ ալ յայտնի պատճենացեր իր բայց շարաթէ մը Մուսան անպարտ կարճանդի և Տայ գիշերապաճը դեռ կը ճըգնէ բանտին մէջ, որուն միայն յանցանքն է, որ վկայ եղած է այս վայրագ ոճրին:

Մուսան իրախուսած, քաշալերած և նոյն իսկ իւր րաւան ոճրագործ կառավարութիւնէն, կրկին որդ նոր շահատակութիւններ ընելու գեռ մի քանի որ ստաջ Միջագիւղի մէջ զարկաւ Վարդան անուն երիտասարդ մը, որ թէև գեռ մտած չէ, բայց վիճակը ծանր է. իսկ Մուսան ազատ հանձնելով և պարտի և անշունչ վառն ալ ուրիշ գիւղ մը կրկինայ նոր սպանութիւն մը ընելու սպասեցով որ կառավարութենէն ընդունի շքանշան մը իր գործած քաջագործութեանց համար:

Ձմռանանք ըսելու, որ Մուսայի յայտնի պաշտպան է Տիրմախ կը աղան Մեծ-Նոր-Գիւղի Պէլէտիցէի ըն-

կը, ինչպէս նաև մէջիւր իտարեթի անգամ, նշանաւոր հայատեաց Շէրիփ աւազակպետը, որ միշտ այս տեսակ շարագործներ կը մտնցանէ իր և կառավարութեան հաշւոյն համար:

S T E T Y U Q H R
Դ Ե Ր Ջ Ա Ն Ի
III

Նախապէս տկարացնելու նետամուտ կըլլան գիւղացին՝ վառելով նրա ցորենի բարդերը, խոտերը եւ շատ անգամ ալ քչել տանելով նախիրը, հօտը եւ այլն Առաջին անգամ, երբ կը ծանոնայ Տայ գիւղացին քիւրդ աղային, վերջինը փաղաքելով կընդունի ստալինը. Հայ գիւղացուս այս առաջին քայլը զանալիթում մ'է դէպի անդունդը. Հազար դրուչ պարտք կընեն եւ 2-3 տարուայ մէջ քանի մը հազարներ կուտան, բայց պարտքը իր մնայ պարտք. եթէ գիւղին մէջ գտնուի մէկն ալ, որ աղային նետ առնուտը ընել չուզէ, վայ՛ է եկեր գլխուն. անպատճառ սիրտի պատճառ:

Չանախնի մէջ մ'աւ. Իրախիկն տունը նշանաւոր էր. Շատ նեղունքով այդ տանը մեղրն ու լաւալը ուտելու կերթային 6-7 տարի առաջ ունէին ընդարձակ հողեր, ջըբաղացներ, հօտեր. Ինթեպակներ եւ այլն, այսօր քան մը չէ մնացեր, անցողը մը չկրնար հիւրնվալել այդ տունը. Նախապետական բազմամարդ տուն մ'էր մ'աւ. Իրախիկի տունը, 28-30 հողի կը հաււին տան անդամները. Հայրը, մեծ եղբայրները մեռած լինելով, Յովհաննէս քեհեանյ տանը գըլուխը անցած էր 1891 թ. սեպտեմբեր ամսոյ մէջ, գիշեր մը, հաւար կուգայ, թէ քրորեք Մղեանոց ջրաղացը կոխեր են. Յովհաննէս քեհեանյ իր եղբոր որդիներով, մեռածներին մէջմէկ մահակ առած կը վազին, կարծելով թէ գործերն ըրալի քորերու նետ պիտի լինի եւ երբ կը ծանոնան ջրաղացին հրացանի զնայակներ կը տեղան վրանին Յովհաննէս քեհեանյ 2-3 գողակէ ծանալայէ վրաւորելով կիւնայ, ինչպէս եւ իւր եղբոր որդիներն երկուքը կը հասկցի թէ զարագէրէնցիքի Հասան աղան է ընել առողը. ո՛վ պիտի համարձակի բողոքել, թէեւ բողոքն ալ սպարդիւն ինչ տարի Մղեանոց երկու ջրաղացներն ալ կանցիկ դարագէրէնցիներին:

Ղարագէրէնցիներ, ինչպէս նա եւ միւս աղաները, գիւղացոց տանը մը ցորենի 200 դրուչի կը ցրին, յալերդ տարին 500 լական դուրունչին ժողովելու պայմանաւ ինչպէս ըսինք, նախապէս քիւրդ աղաները յեղազակութեանս կողքատացներն գիւղացիները եւ յետոյ կոխեր ըոյն գնել անոնց մէջ. երբ որ անգամ տեղ մը հաստատուի, ուրիշ մարդ չկրնար գործ ընել. կողքերը Միջան այս գիւղերուն մէջ ունեցած անտեսուող պատճառ նզուա երկու որդոցը գնալախար լինելուն:

Արախիկի մէջ զարագէրէնցիքին Սանակ քեհեանյն գիւղին առիթը ունեցած մէկ ընդարձակ արտին այճ կը տընկէ 1890 թ. ապրիլ, երբ նոր ցնումած կըլլայ արտը, չորս կոտ ցորեն ալ ինչ սեփեկ կուտայ արտին երեսը. Յալերդ տարին ուժք տանը ցորեն կեցնել այդ արտէն. զարագէրէնցիքին ձայն չաները երկու տարի վերջ, երբ ցորենի գինը կը բարձրանայ, կուգայ աչախ կը նստի Սանակ քեհեանյն նետ իր չունեցած իրաւունքը կը պահանջէ. մարդը կապչի կը շարի, ինչ անխիղճ կը մտնայ, ոտքը կը պահէ, մեռքը կը պահէ, բայց անողքելի կը մնայ Հասան աղան. 40

սակի կուզելս, կրսէ, կէ՛ք ոչ կիմայ տունջ տեղը կրակի կուտամ Կիւրացիք կուզան, կը միջնորդեն, հազար աղաչանքով հաղիկ կը կարողանան յիշեալ արար ընդարձակ տալու չունեցած իրաւունքի փոխարէն Չմոռնանք ըսելու, որ ասուճակով պաշտօնական գործողութիւններն այլ կատարելու համար, բաւական է, որ աղան մերթքը փուռուսա մը զոյէէ. անմիջապէս թափուք քանքիսին կուգայ եւ իր պատիշտը առնելով, աղային հրամանին համեմատ կը կարգադրէ:

Այս գիւղերը՝ Չանախճի, Աղաթեր, Հերոնի, Մարդկարի, Վժան, ապրանքի գործ ընդունեն են Դարազէրէնցիքի Հասան աղան, պէ՛ճնէկկի Մէհմէդ աղային տղաքը, ֆէ՛ւցի Մէհմէտ աղային տղաքը, Շիպ աղասին եւ ուրիշները, ասանք ամենքն ալ 120 հեծեալ ապառաղիմեալ չելու գանդներով 3-4 ամիս չափ կը մնան այս աղքատ հայ գիւղերու մէջ: Ինչո՞ւր չնի ընել, ի՞նչ կը քաշեն խեղճ զիւղաչիցիքը՝ ամեն որ գտան, ոչխար պիտի մարթէ՞ն, ճիւրճը քարի պիտի դրո՞ւն. Սիճեղիտս տունը բան չէ մնացել արդէն. կերթնան պատրտով կը գտնան ու կը բերին այս գալաններուն կը կերտուան ինչպէս ըսինք. թահսիւղաթի համար ալ ամեն զիւղ 5-6 ժամունքովէ կայ ու կայ. ասունք ալ շիւղօք աղաներն ոչ նազօք անխղճութեամբ կը վարեն. ի հաշի տուրքէ, ով որ ասի ի՞նչ ցորեն ունի կամ կով մը, ոչխար մը, մինչև իսկ պատկերու համար մէկ հատիկ ցնցուփ անխղճութեամբ, ամբողջ կայարաժողովեամբ կը քաշեն, կանեն. ի՞նչ կընեն, այդ միջոց իրենք զիտն. միջոց արդէն յայտնի է, որ ընդ միշտ հաւաքած գրանները կէս առ կէս հաւաքիչներուն զբաղանները կը լեցնին Վերջապէս այսօր այս գիւղերու հայ ընտիրները առհասարակ աւարկաբոյ կարող կարտո չճաւարտութեան են մասնաւած. Ախրստեղու կարող երիտասարդները պանդխտութեան մէջ կը տառապին, շատ մը կիներ ու անչափահասներ պէ երջնեա կը այլուր մուրացկանութեամբ կը շրջին. Հողեմերին ամողջ ջիւղօք աղաներուն անցած են, պարտքերինն մինչև զվերինն ալ սովակու կարողութիւն չէ մնացել. 1-2 տարեկն անպատճառ այս գիւղերը ջիւղօք աղաներու սեփականութիւնն պիտի լինին Այսպիսի քայքայեամ այսպիսի տուններու եւ գիւղերու կործանում սուղի կուենայ 8-10 տարու պէջ շնորհի յոռի կառավարութեան

Թող չկարծի, թէ այս ջիւղօք աղաները կառավարութեան ընտրու եւ անհնազանդ փորձելով, հակառակ անոր կամայց այսպէս կը վարեն ու կարելոյն երկիրը, ո՞չ. այս կողմերի նահանգագետնէ մինչև յետին ոտակներ կը վարձատրեն միշտ ջիւղօք աղաներէն եւ արդէն ո՞վ են պաշտօնանները՝ ամենքն ալ աւազակներ, ամենքն ալ բարոյ, յայպէ փնջացած հրէշներ, որոնց նշարկարէր կէ՛ք հանն ուղենք, շատ երկար պիտի ըլլայ. միջոց հոս տեղն է խաբիսիք Անձեռ աղայի այս գիւղերու մէջ ր գործ դրած մի քանի անաղաղութիւններն ու խժժութեթիւնները պատճառու Անձեռ աղա, աւազակութեամբ հարստացող, 10-12 տարիէ ի վեր գրեթէ շարունակ վարչական ժողովը (մէճ-խար խորթէ) անցած է այս կողմի. հայերու պատուհարը 1890 թ. աշուշ Թուրքի գիւղի մէջ առեւտուր ընող երգնակայի երկու եղբարք Բամանդիան Պետրոսի եւ Նշանի 120 լրկալի արժողութեամբ մանկեպարտութի պարտաքը, իւրն մարապութիւնն ընող Նրոնով, սր թուրքիկէն հաղիւ կէս մաս հետաւորութիւն ունի, Բառաստիկի քարերը, իրիկեան մասը 2-ին ամաղողովն թայլլելով կը աստին Անձեռ աղա մասնաւոր բաժնի մը կը հրահե՛ թայլողներուն. միայնք ամբողջ 100 լրկալի չարի կը մնայ իր քով: Բանջեղան եղբարք շատ լաւ ճանչցան չելուզակները, Մամախաթիւն, Նրոնկա, Կարին շատ ալ աշխատեցան ու զրամ ծախսեցին, բայց վերջապէ կորէք լսելի ընել սալ իրենց բողոքները, մնացն խեղճ ու թշուառ:

1894 թ. յունուր ամսոյ մէջ Մարդկարի գիւղի կամ ունկի ճիշոր՝ այդ կողմերի միակ հարուստ Զարմանին տար-

ցը տունը կը մտնեն գիշեր մը Անձեռ աղայի մարդիկը եւ տունը գանձողներուն՝ այր եւ կին մարդը ձեռքերն ու ոտքերն կակպելով՝ սողկալ չարչարաններով կը տառապեն ճննն խեղճները եւ կը սպաննան ամենքն ալ սրի անչին. կէ՛ք չյանձնեն ունեցած ոսկիներ Կանանց ամողջ դարչները եւ նեղ օրան համար պահած 150 ոսկիներ կը յանձնեն չելուզակ գողերուն, որք՝ տնեցիներուն մի քանիքը արդէն վրիճարած՝ կը մննին Չարման տղաքը, ինչպէս նաեւ զըրացիները կը ծանչնան չելուզակները եւ կը հասկանան որու զրոյմար ըլլալը, բայց գործին մէջ Անձեռ աղան ըլլալուն համար չեն համարձակել ձայն հանել:

1893 թ. սեպտեմբերի մէջ խարինցի Դէրէր աղայէն Բէճէպին եղբարը Հերոնիի ջրաղացը ցորեն կը սանի աղուում. երբ կը տնենէ, որ նոյն գիւղացի Բէչիլէնցի Ակօյլու գործները կազմիչ, կը հրամայէ՝ որ անոր ցորենները զատարկին իրենները լեցուն աղցելու: Մարդը դիտել կուտայ, որ ջէր մը մնացել է, իրենցը մի ժամէ կը վերջանայ: Մտիկ չընել ֆէճէպին եղբարը եւ կերթնալ Լուրի լըրաւը քանիչու. Հերոնցիք չեն թողուր մարտնչի թուրքը կը զայտարայ, կը կտուրի, բայց տնեկով, որ միայնակ ընդի չարտի կրնայ շօնել ընել, կը վաղէ գիւղը՝ եղբոր լուր կուտայ. եղբարին ալ Բէճէպ Անձեռ աղայի փեսայ Չէսէրին ձայնելով՝ մէյմէյ մարտնչի կառնեն եւ կը վաղեն ջըրաղացը, Հայկոյր երբ արդէ կը նշմարին, կը փախիլն լեղի պատատ. միայն Բէչիլէնցի Ակօն եւս կը մնայ կը հասնին բարբարոսները, Բէճէպ մարտնչին ջաշելով երկու գնտա կաւ ինզն մարդը ծանցապէս կը վրիճարէ, որ կը ապագայէ գեպիտին Առոյլ ալ չը բաւականատուով, մարտնչները ձեռքերը կը մտնեն գիւղ՝ Հերոնի, զի ուրիշներն ալ սպաննելու մտքով, բայց գիւղացիք սարսափած կը փախիլն տանեն եւ կը փախիլ դռները Մի քանի ժամ վերջ, երբ կը մննին կառացած ոճրագողները, գիւղացիք կերթնան պատարակով Ակօն կը բերեն գիւղը: Յաջորդ օրը կը բողոքի մէքեզը, բժիշկ, պաշտօնաններ կուզան, բարձր կուտան, նահանգան քնութիւն մ'ալ կը կատարին եւ ոճիրներուն ըրածը կը հաստատու Ակօն պատգարաղով մէքեզը կը սանին, հոն ալ գարնեալ քնութիւնով կը հաստատու Բէճէպին ու Դէրէրին ոճիրը գործած ըլլալուն Դառապանին 4-5 ամուսայ մէջ մի քանի անգամ ճէլպ կը զրկի նսեւ նուն, բայց ճէլպ տանող ստտիկըր Անձեռ աղայի Խաթեթըր համար, ամեն սեղամ մը՝ մի քանի գուրուչ անեն լով կերթայ կրսէ՛ թէ գիւղը չկալին Այսպէս կը մարտնչիքը Ակօն տասն ամիս անկողնոյ ծառայելէ վերջ, հազիւ կարատի, աջ ձեռքն եւ սրունքը ծանցապէս հայնած:

Դայձեռով 1893 թ. սեպտեմբերի մէջ, Մարդկարին նոյն գիւղացի երկու անգամ հայ կին Աղաթէր քացած ժամանակինն ճամբան սեղացի թուրքերէն նախ կը լլկին եւ յետոյ քարխոտող կը լինին Նրոնուաղացիները յայտնի լինելով հանդերձ, քնութիւն իսկ չկատարուի որ քնտութեան խեղճ զաներու համար:

Պօլս-Կոնստն դաճճ Տեղանուն սպանման տեղագրքը, որ ստացալը ամսոյ 5-ին (Ն. տ.), անմեղքան զտարնով առսմուն թեթեւիմուն լնայ, ցուցմքը:

Թէն «Անարձն 8-ի ցոյճ» Թողակցութիւնն ուշ տացանը, բայց եւ սնայն հաղի համարցնելը գետնէն այն սոքիկա Նուն, երբն արժանագործութիւն թէ Գոլսում գտնող պանդուկա հայաստանցուն եւ թէ պատմքներն ու յայտնի մասն տրամադուրծան:

Մեզ դեմոստրեն յայտնող ներ, որ թէ «Գոլսում» եւ թէ մեր մեզ զտատարակութիւնները մեր ն ուղարկուում:

Կաշմուկոմիթեան ամսաթիւսիրքի խնդրում է Թողակցութեան եւ Նեղբուականութեան հասցոյ դիմել:

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան պալատ տպարան